Սայաթ Նովա

Յիս քու ղիմեթը չի՞մ գիդի

Թասլիք, էսպես Արութինի ասած:

Յիս քու ղիմեթը չի՞մ գիդի՝
Զավահիր քարի նըման իս.
Տեսնողին Մեջլում կու շինիս,
Լեյլու դիդարի նըման իս:

Աշխարումըս իմը դուն իս,
Բեմուրվաթ իս, մուրվաթ չունիս.
Պըռոշնիրըդ նաբաթ ունիս,
Ղանդ ու շաքարի նըման իս:

Դադա պիտի՝ թարիփդ ասե,
Ակռեքըդ յաղութ-ալմաս է,
Ռանգըդ փըռանգի ատլաս է,
Զար ղալամքարի նըման իս:

Մազիրըդ նըման ռեհանի,
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,
Ռահմ արա, հոքիս մի՛ հանի,
Մուրվաթով յարի նըման իս:

Վո՛ւնց դիմանամ էսչափ չարին,

Աճկեմես կաթում է արին.
Սայաթ Նովա, նազլու յարին՝
Գընած նոքարի նըման իս: